ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/201

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Մաստերֆուդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մաստերֆուդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Կարտոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, ապրանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-6»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 12.11.2019թ. թիվ 26/26-1/18613-2019 գրությամբ «Մաստերֆուդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 07.11.2019թ. թիվ ՊՆ/02/2352-2019 գրության հիման վրա, 12.11.2019թ. «Մաստերֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 12.11.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 19.11.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 19.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.12.2019թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 07.11.2019թ. թիվ ՊՆ/02/2352-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Մաստերֆուդ» ՍՊԸ-ի միջև 19.02.2019թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-7/3-6 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. հոկտեմբերի 30-ին միակողմանի մասնակի լուծել է N ԷԱՃԱՊՁԲ-7/3-6 գնման պայմանագրին կից N 1 համաձայնագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 01.11.2019թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են վերոնշյալ մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Մաստերֆուդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 13.11.2019թ. գրությամբ դիմել է «Մաստերֆուդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.11.2019թ. թիվ 26/26-1/18613-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք:

Մասնակցի ներկայացուցիչը ներկայանալով նիստին հայտնել է, որ Պայմանագիրը կնքվել է ընդհանուր 106 800 000 ՀՀ դրամ գումարով, սակայն հետագայում քաղաքացիական ընկերությունների կողմից սննդամթերքի մատակարարման պատճառով պահանջվող ապրանքի քանակը նվազել է, ուստի կնքվել են Պայմանագրի անբաժանելի մաս կազմող համաձայնգրեր, որոնցով պայմանագրի ընդհանուր գինը նվազել է, որով էլ և պայմանավորված Պայմանագրի կատարումը դարձել է անհնարին:

4. <u>ՍՑ-LO-2019/201 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի միջև 19.02.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-6» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր)՝ ընդհանուր 106 800 000 ՀՀ դրամ գումար գնի արժողությամբ:

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումը կիրականացվի 2019-

2021թթ.՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով նախատեսված ժամկետում:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի միջև 22.05.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-6» ծածկագրով պետական գնման պայմանագրի կից թիվ 1 համաձայնագիրը (այսուհետ՝ թիվ 1 Համաձայնագիր):

Թիվ 1 Համաձայնագրի 2.1 կետի համաձայն՝ Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 15 289 300 (տասնհինգ միլիոն երկու հարյուր ութսունինը հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի միջև 30.08.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-6» ծածկագրով պետական գնման պայմանագիրը (համաձայնագիրը) փոխադարձ համաձայնությամբ մասնակի լուծելու մասին համաձայնագիր (այսուհետ՝ թիվ 2 Համաձայնագիր):

Թիվ 2 Համաձայնագրի 1.1 կետի համաձայն՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին մասնակի լուծել Պայմանագրին կից № 1 համաձայնագիրը՝ չմատակարարված 9000 կգ կետչուպի մասով համաձայն սույն Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածների: Արդյունքում № 1 համաձայնագրի ընդհանուր գինը կազմել է 9 996 850 (ինը միլիոն ինը հարյուր իննսունվեց հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

www.gnumner.am համացանցային կայքում 01.11.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի միջև 22.05.2019թ. կնքված թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-6» ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագրի շրջանակներում Մասնակիցը 2019թ. հունիս ամսին չի մատակարարել 6500 կգ կետչուպ:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. հոկտեմբերի 30-ին միակողմանի մասնակի լուծել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-6» ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը:

5. **Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.11.2019թ. թիվ 26/26-1/18613-2019 գրությամբ «Մաստերֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը

պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն' պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու

համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի միջև 19.02.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-6» ծածկագրով պետական գնման պայմանագիր՝ ընդհանուր 106 800 000 ՀՀ դրամ գումար գնի արժողությամբ: Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումը պետք է իրականացվեր 2019-2021թթ.՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով նախատեսված ժամկետում:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի միջև 22.05.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-6» ծածկագրով պետական գնման պայմանագրի կից թիվ 1 Համաձայնագրի 2.1 կետի համաձայն՝ Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 15 289 300 (տասնհինգ միլիոն երկու հարյուր ութսունինը հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի միջև 30.08.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-6» ծածկագրով պետական գնման պայմանագիրը (համաձայնագիրը) փոխադարձ համաձայնությամբ մասնակի լուծելու մասին թիվ 2 Համաձայնագրի 1.1 կետի համաձայն՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին մասնակի լուծել Պայմանագրին կից № 1 համաձայնագիրը՝ չմատակարարված 9000 կգ կետչուպի մասով համաձայն սույն Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածների: Արդյունքում № 1 համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 9 996 850 (ինը միլիոն ինը հարյուր իննսունվեց հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

www.gnumner.am համացանցային կայքում 01.11.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի միջև 22.05.2019թ. կնքված թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-6» ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագրի շրջանակներում Մասնակիցը 2019թ. հունիս ամսին չի մատակարարել 6500 կգ կետչուպ:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. հոկտեմբերի 30-ին միակողմանի մասնակի լուծել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-6» ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը:

Հիմք ընդունելով վերոնշյալը, համադրելով գործով ձեռք բերված փաստական հանգամանքները, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունն անպատշաճ (մատակարարման ժամկետների 40 օր և ավել խախտմամբ) կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով՝ ՀՀ պաշտպանության նախարարության (որպես պարտատեր) և «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի (որպես պարտապան): Պարտատերը, թեկուզ անզգուշությամբ, սակայն իր գործողություններով նպաստել է պարտապանի կողմից ստանձնած պարտավորություններն անպատշաճ կատարելուն, ինչպես նաև ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, որի արդյունքում էլ հանգեցրել է պայմանագրով նախատեսված Մասնակցի կողմից ստանձնած պարտավորության խախտմանն ու դրա հետևանքով՝ պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ի սկզբանե Պայմանագրի գին նախատեսելով 106 800 000 ՀՀ դրամ գումարը, հետագայում կնքելով թիվ 1 համաձայնագիրը ընդհամենը 15 289 300 ՀՀ դրամ գումար ընդհանուր գնով, օբյեկտիվորեն զրկել է Մասնակցին այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել

պայմանագիրը կնքելիս, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը՝ էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ նման պայմաններում Մասնակցի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու ընթացակարգը մերժելու միջոցով:

Ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.11.2019թ. թիվ 26/26-1/18613-2019 գրությամբ «Մաստերֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ թիվ ՍՑ-ԼՕ-2019/201 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**